


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի մայիսին


(վերլուծություն)

2015 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15400 գործարք, որոնց քանակը 2015 թվականի ապրիլ ամսվա համեմատ նվազել է 2.0 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 14.3 %-ով:

2015 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3994 օտարման գործարքի 77.4 %-ը կազմել է առուվաճառքը, 22.4 %-ը՝ նվիրատվությունը և 0.2 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 34.5 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.2 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի մայիսին, 2015 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 2.8 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 13.8 %-ով:

2015 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի մայիսին, 2015 թվականի ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.6 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ նվազել 25.6 %-ով:

2015 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2014 թ.	մայիս 2015 թ.	ապրիլ 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282700	282700
Նոր Նորք	252500	253200	253100
Ավան	260200	260700	260650
Էրեբունի	250850	252000	251900
Շենգավիթ	256100	257100	257050
Դավթաշեն	275150	275800	275700
Աջափնյակ	249600	250100	250000
Մալաթիա-Սեբաստիա	242000	243200	243200
Նուբարաշեն	155800	156750	156750

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի ապրիլի համեմատ աճել են 0.02%-ով:

2015 թվականի մայիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 324 բնակարան, որոնց քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 5.0 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 9.7 %-ով:

2015 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2014 թ.	մայիս 2015 թ.	ապրիլ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57450	57750	57650
	Թալին	65850	66000	65900
Արարատ	Արտաշատ	96500	97900	97800
	Մասիս	115550	115800	115800
	Վեդի	100700	101200	101200
	Արարատ	75400	76500	76000
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	60100	60100
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	44850	44850
	Ճամբարակ	28700	28700	28700
	Վանաձոր	88400	88500	88500
Լոռի	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55200	55200
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550	128550
Կոտայք	Բյուրեղավան	108150	108200	108200
	Եղվարդ	109400	109400	109350
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109300	109200	109200
	Արթիկ	66700	66800	66800
Շիրակ	Մարալիկ	40700	40750	40750
	Գորիս	122000	122950	122950
	Կապան	92500	94100	93700
Սյունիք	Սիսիան	91150	91950	91950
	Մեղրի	80900	81850	81500
	Ագարակ	46900	47300	47200
	Քաջարան	94650	94600	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայոց ձոր	95000	95000	95000
	Եղեգնաձոր	125500	125600	125600
Տավուշ	Ջերմուկ	112900	112950	112950
	Դիլիջան	113150	114000	114000
	Իջևան	118300	118350	118350
	Բերդ	60200	60200	60200
	Նոյեմբերյան	49900	49900	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 321 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 108 գործարք, մարզերում՝ 213 գործարք: 2015 թվականի մայիսին, 2015 թվականի ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 8.5 %-ով, իսկ մարզերում՝ 19.6 %-ով: 2015 թվականի մայիսին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 23.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 5.3 %-ով, իսկ մարզերում՝ 29.9 %-ով:

2015 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2014 թ.	մայիս 2015 թ.	ապրիլ 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2014 թ.	մայիս 2015 թ.	ապրիլ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի մայիսին հանրապետությունում օտարվել է 1723 միավոր (1027.07 հա) հող, որից Երևանում՝ 96 միավոր (6.13 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1056 միավոր (955.00 հա), որից Երևանում՝ 11 միավոր (1.05 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 451 միավոր (42.78 հա), որից Երևանում՝ 54 միավոր (2.41 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 121 միավոր (12.55 հա), որից Երևանում՝ 29 միավոր (2.62 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 15 միավոր (5.28 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.05 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 2 միավոր (8.97 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 77 միավոր (2.37 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.13 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1492 միավորի (950.06 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 77 միավոր (5.00 հա), նվիրատվության գործարք՝ 227 միավորի (76.70 հա), որից Երևանում՝ 19 միավոր (1.14 հա) և փոխանակության գործարք՝ 4 միավորի (0.31 հա):

Հանրապետությունում 2015 թվականի մայիսին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 1.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 10.8 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 15.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 14.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 289.97 հա, որից 285.52 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.7 %-ը կամ 353 միավորը (127.29 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 21 միավոր (0.42 հա), իսկ 75.9 %-ը կամ 1133 միավորը (822.50 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 56 միավոր (4.58 հա): 2015 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 6 գործարք (0.27 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2015 թվականի մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.01	10	0.26	10	0.15	7	0.36	1	0.05	31	1.77	17	2.41
Արագածոտն	25	14.35	0	0.00	3	0.04	1	0.02	59	43.26	0	0.00	15	1.53	2	0.03
Արարատ	9	43.13	2	0.17	17	1.14	0	0.00	76	135.25	0	0.00	37	2.80	3	0.04
Արմավիր	1	0.32	0	0.00	1	0.004	1	0.04	87	285.20	1	0.24	45	4.11	3	0.06
Գեղարքունիք	11	3.76	1	0.10	8	0.64	5	0.74	25	28.00	0	0.00	9	1.35	2	0.02
Լոռի	2	0.35	0	0.00	7	0.08	20	2.99	366	158.42	0	0.00	7	0.40	6	0.28
Կոտայք	14	9.10	2	2.09	57	3.91	15	1.16	60	47.68	0	0.00	79	6.74	9	2.35
Շիրակ	0	0.00	1	0.90	1	0.002	4	0.13	37	30.89	0	0.00	14	9.11	1	0.004
Սյունիք	1	0.02	1	0.94	5	0.13	1	0.05	20	26.18	0	0.00	10	1.07	1	0.23
Վայոց ձոր	17	25.82	0	0.00	0	0.00	1	0.001	63	25.18	0	0.00	4	0.34	0	0.00
Տավուշ	9	2.88	2	0.31	7	0.34	4	0.22	25	5.36	0	0.00	5	0.64	3	0.84
Ընդամենը	89	99.73	10	4.52	116	6.55	62	5.50	825	785.78	2	0.29	256	29.86	47	6.26

Ստորև ներկայացված է 2015 թվականի մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	18	0.31	1	0.01	10	0.26	7	0.04	3	0.11	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.11
Արագածոտն	1	0.02	0	0.00	0	0.00	1	0.02	24	14.11	21	14.07	0	0.00	3	0.04	0	0.00
Արարատ	2	0.01	0	0.00	2	0.01	0	0.00	26	44.42	9	43.13	2	0.17	15	1.12	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.36	1	0.32	0	0.00	1	0.004	1	0.04
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	5.22	9	3.74	1	0.10	8	0.64	5	0.74
Լոռի	5	0.915	0	0.00	1	0.005	4	0.91	24	2.50	2	0.35	0	0.00	6	0.08	16	2.07
Կոտայք	5	0.014	0	0.00	4	0.01	1	0.004	82	16.01	13	8.86	2	2.09	53	3.90	14	1.16
Շիրակ	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	5	1.03	0	0.00	1	0.90	0	0.00	4	0.13
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	6	1.12	0	0.00	1	0.94	4	0.13	1	0.05
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	25.821	17	25.82	0	0.00	0	0.00	1	0.001
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	21	3.71	8	2.84	2	0.31	7	0.34	4	0.22
Ընդամենը	33	1.27	1	0.01	19	0.29	13	0.97	235	114.41	80	99.13	9	4.51	97	6.25	49	4.52

2015 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարք (0.61 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի մայիսին, 2014 թվականի մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 17.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 72.7 %-ով, իսկ մարզերում՝ 15.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 31.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 28.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 37.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 10.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	20	13.57	103.4	1097.0	438.2	40	12.94	365.0	12000.0	3710.2
Ապարան						1	0.56	86.5	2727.3	650.3
Թային						10	12.99	93.6	5494.5	790.0
Ծաղկահովիտ	1	0.50	72.5	72.5	72.5	7	16.61	79.5	1000.0	345.5
Արարատի մարզ										
Արտաշատ	2	8.32	391.9	2267.1	1329.5	38	8.57	335.1	10833.3	2603.8
Մալիս						7	3.25	200.0	11904.8	3103.7
Վեդի	7	34.81	58.6	3080.3	526.3	31	123.43	207.0	10795.1	1795.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						43	28.16	294.3	9090.0	1222.6
Բաղրամյան						18	247.00	90.6	2561.1	891.5
Վաղարշապատ	1	0.32	1050.0	1050.0	1050.0	26	10.04	444.4	11764.7	1933.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.58	199.8	1875.0	462.3
Ճամբարակ	1	0.12	1811.7	1811.7	1811.7			60.5	953.3	352.0
Մարտունի	4	0.40	132.0	660.6	396.2	6	0.52	51.1	2850.0	807.5
Սևան	4	3.22	172.5	180.0	178.1	2	0.08	52.2	2134.8	342.0
Վարդենիս						11	24.82	41.2	2575.1	415.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.28	167.2	167.2	167.2	152	31.84	170.4	6424.2	605.0
Գուգարք	1	0.07	1380.9	1380.9	1380.9	30	7.83	234.6	6065.9	782.3
Սպիտակ						10	2.89	250.0	5555.5	700.0
Ստեփանավան						6	6.98	90.6	1686.6	385.0
Տաշիր						168	108.88	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	0.15	3524.6	3669.2	3596.9	20	10.86	279.3	11942.7	4063.4
Եղվարդ	3	1.01	100.6	1892.5	1116.6	31	16.22	174.4	11971.8	2426.9
Հրազդան	8	7.70	85.5	1191.0	854.7	7	5.21	130.5	10256.4	1150.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	6.22	252.0	1693.1	623.5
Ամասիա						4	4.32	40.9	261.0	131.5
Անի						12	9.48	110.6	546.9	457.2
Աշոցք						1	2.65	58.5	215.8	137.2
Արթիկ						13	8.22	79.4	1428.6	500.0

Սյունիքի մարզ										
Գորիս						5	10.49	92.6	1023.2	792.2
Կապան								120.0	841.6	400.0
Մեղրի								193.0	3000.0	750.5
Սիսիան						15	15.69	46.3	1977.4	600.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1.82	87.8	87.8	87.8	5	1.28	125.0	10000.0	1850.0
Վայք	15	24.01	72.0	72.0	72.0	58	23.90	58.8	1430.7	605.7
Տավուշի մարզ										
Բերդ						15	1.63	213.3	3783.8	670.0
Իջևան	4	1.56	932.2	1216.0	1086.4	6	1.09	267.5	9454.5	1385.0
Նոյեմբերյան	4	1.28	723.3	2922.7	1822.4	4	2.65	46.7	7368.4	980.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի մայիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մոսավելագույն	Միջին			Նվազագույն	Մոսավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	437.5	4825.9	5000.0	4942.0	14	12777.7	130.7	22200.0	2587.0
Ապարան								124.1	609.6	389.5
Թալին						1	2500.0	63.2	1454.8	152.6
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ						9	6967.7	173.9	7140.3	905.0
Մասիս	15	11207.1	1970.3	3589.4	2078.3	20	13771.6	187.5	25000.0	1210.0
Վեդի						7	6230.0	126.1	5000.0	664.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	42.0	2940.0	2940.0	2940.0	15	11965.0	131.6	9090.9	1214.2
Բաղրամյան						1	1000.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						29	28154.5	197.4	26528.4	1530.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1710.0	186.6	1084.3	683.7
Ճամբարակ	3	122.5	312.5	384.8	360.0			71.3	2286.2	146.8
Մարտունի	5	6254.0	220.0	381.1	289.9	5	7961.0	119.3	5000.0	280.8
Սևան						3	3857.0	240.0	3110.4	335.0
Վարդենիս								72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	3	513.7	385.0	1650.0	1228.3	1	500.0	114.3	1388.9	216.8
Գուգարք	1	46.8	2201.3	2201.3	2201.3	1	472.1	77.9	14083.3	1260.4
Սպիտակ								104.9	1348.3	207.6
Ստեփանավան						2	1882.3	88.2	1666.7	176.0
Տաշիր	2	214.7	297.0	300.0	298.3			45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	51	37274.7	640.0	5428.9	2112.8	46	34500.1	264.5	35353.5	1982.5
Եղվարդ	2	1706.9	232.0	2612.6	1422.3	29	30410.0	173.6	27000.0	2862.5

Հրազդան						3	1300.0	117.7	34848.5	1318.1
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	78252.5	113.6	18750.0	334.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	2600.0	67.9	180.6	196.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						5	10260.0	111.8	5000.0	218.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	6518.0	112.2	1700.0	366.0
Կապան	2	302.2	977.5	1105.3	1041.4	1	600.0	67.9	2638.9	343.0
Մեղրի	2	954.0	305.9	1081.8	693.9	3	2600.0	68.5	632.9	250.0
Սիսիան						1	1000.0	123.5	875.0	235.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3436.0	96.7	7659.6	509.0
Վայք								120.7	1448.3	245.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	125.3
Իջևան	6	3244.8	3000.0	3000.0	3000.0	5	6374.5	74.1	14423.1	525.2
Նոյեմբերյան	1	108.0	250.0	250.0	250.0			125.0	1948.1	246.5

2015 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 599 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 78.5 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի մայիսին, 2015 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 2.3 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 6.6 %-ով:

2015 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 35 բնակարանի, 33 անհատական բնակելի տան, 319 հասարակական և 67 արտադրական նշանակության օբյեկտի, 140 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի ապրիլի և 2014 թվականի մայիսի համեմատ նվազել է 14.3 %-ով: 2015 թվականի մայիսին հանրապետությունում վարձակալված 153.94 հա հողից 0.12 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 153.81 հա հողից 136.64 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 7.13 հա արդյունաբերական օբյեկտի, 0.01 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Գեղարքունիքի մարզում՝ 27.12 հա, որից 21.20 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1352 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 8.8 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 9.1 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 30.5 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.0 %), անհատական բնակելի տների (22.8 %),

հասարակական նշանակության օբյեկտների (12.1 %) և հողերի (8.6 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 780 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ նվազել է 0.9 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 29.4 %-ով:

2015 թվականի մայիսին հանրապետությունում գրավադրվել է 83.60 հա հող, որից 3.39 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 91.4 %-ը կամ 76.41 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Շիրակի մարզում՝ 26.26 հա, որից 26.04 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի մայիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 104 գործարք: 2015 թվականի մայիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 25.7 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել է 41.9 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 79 գործարք, որը 2015 թվականի ապրիլի համեմատ նվազել է 22.5 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 41.0 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ նվազել է 34.2 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 44.4 %-ով:

2015 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1844 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 9.8 %-ով, իսկ 2014 թվականի մայիսի համեմատ՝ 2.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (28.6 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե